հաղթահարել իր առջև ծառացող բոլոր գժվարությունները շնորհիվ լայն մաս սաների ինքնագործունեյության առավելագույն ծավալման, մասսական կազմակերպությունների աշխատանքի առավելաչափ աշխատացման՝ կազմակերպելով և միաձուլելով իր չորջը պրոլետարիատի լանագույն զանգվածները:

Յեվ նորանոր ու բարգագույն այն գժվարությունների հանդեպ, վոր ծառացած են այսոր մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման առջև, — կենտրոնական կոմիտեն կոչ և անում կուսակցության բոլոր անդամներին — կենտրոն ցնելու իրենց բոլոր ուժերը տնտեսական գժվարությունները հաղթահարելու գործի վրա, ինչողեւ նաև բանվոր զասակարգի բոլոր ստեղծագործական կարողություններն համախիլմբելու, մորիկիզացիայի յենթարկելու վրա, վորպես ինդուստրիացման և համայնքանացման մեր ընդունած թափը հնարավոր լինի ինչ գծով ել լինի պահպանել և տնտեսական ծրագրված պլանն ամբողջովին կատարել:

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԲԱՆՎՈՐՆԵՐ ԸՆԴՈՒ-
ՆԵԼՈՒ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ ԿԱՐ-
ԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Բանաձեվ ընկ. Մոլոտովի գեկուցման առքիվ, ընդունված միաձայն Համկոմկուսի (թ) Կենտրկոմի պլենումի կողմից 28 թ. նոյեմբերի 24-ին):

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՃՄԱՆ ԽՆԴՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ.**

Վերականգնման շրջանից սոցիալիստական վերակառուցման, ամբողջ տնտեսությունը ավելի բարձր տեխնիկայի հիմունքով վերաշինելու շրջանին անցնելը, վոր վորոշում և տնտեսության մեջ ինդուստրիայի ազդեցությունը՝ առանձնապես ուժ տալով խոշոր արդյունաբերության և կոռպերացման խսկապես մասսայական ծավալման ու գյուղի կոլեկտիվացման, — մեր յերկրի բանվոր դասակարգի առաջ դնում և սոցիալիստական անմիջական կառուցման հիմնական խնդիրները: Խնչական միջաւ, բանվոր դասակարգի առաջին շաբթերում, սոցիալիստական շինարարության առաջնորդական դիրքերում և գտնվում մեր կուսակցությունը: Առանձին դժվարությունների հետ և կապված սոցիալիստական վերակառուցման շրջանը, քանի

վոր բանվոր դասակարգը կուլտուրապիս հետամնաց և յերկրի մեջ տիրապետում ե մանր ու խիստ մանր գյուղացիական արտագրությունը: Նամանավանդ միշտային իւպերիպալիզմը նոր ու նոր և ավելի վըճռական փորձեր և անում արտաքուստ ձնշումին և ձգուում և Խորհրդային Միությունը յենթարկել ուղղակի կապիտալիստական պետությունների տնտեսական բլոկադայի և զինական հարձակում և պատրաստում: Այսպիսի հանգամանքներում բացառիկ ծանր և ու պատասխանատու կուսակցության գերը վորպես պրալետարիատի կոմունիստական առաջապահի լեվ սոցիալիստական ամբողջ ժինարարույան դեկավարի:

Զնայելով հեղափոխական պարքարի ու սոցիալիստական շինարարության ամենամեծ դժվարություններին՝ իսրայելի իշխանությունը ապահովել և սոցիալիզմի առաջին խոշոր հաջորդությունները: Այդ հաջողությունները ձեռք են բերված յերկրի ներքին միջոցները հետզհետե ավելի ու ավելի ոգտագործելով և հնարավոր են զարձել միմիայն բանվոր դասակարգի բացառիկ հերոսության և սոցիալիզմին անձնվեր լինելու շնորհի, և այն բանի, վոր նա հենվուա և գյուղացիական միլիոնավոր մասսաների հետ ավելի ու ավելի ամրապնդվող միության վրա: Խորհրդային իշխակարգի շնորհիվ սոցիալիզմի զառուցման զործի մեջ ապահոված ե բանվոր դասակարգի, Խորհրդային Միության բոլոր ազգությունների աշխատավոր գյուղացիների լայն մասսաների ներգրավումը և նախկին ձնշված ու հետամնաց ազգությունները գործոն մասակցության են անցել խորհրդային ամբողջ շինարարության մեջ:

Կուսակցությունը՝ վորպես բանվորների ու աշխատավորների ամբողջ մասսայի իսկական դեկավար, նա միշտ ել գլուխ անցած ե յեղել սոցիալիստական նոր հասարակության հիմքը կառուցող խորհուրդներին:

Ներկա հանգամանքներում, յերկրի տնտեսության սոցիալիստորեն վերաշիներու պայմաններում, խորհուրդների գերը խոշոր չափով պետք երարձանաւ Դրա համար ան բաժեշտ ե շատ բան փոխել և քաղաքում և գյուղում հիմնովին բարեկավել խորհուրդների տշխատանքը և ամենից առաջ վճռականապես ու գործն կանորեն տեղից շարժել պետական ապարատի բյուրոկրատիզմի գեմ պարագելու գործը: Խորհրդական ներկա ապարատում գեռ ևս շատ կան հին շինովնիկա կան տարբեր և նախկին տիրապետող գասակարգերի մնացորդները, վորոնց մեջ գեռ կենդանի ե ատեռությունը գեղի խորհրդագիրներին իրավակարգը: Բյուրոկրատական աղավաղաւմները, աշխատավորների կարիքներին անուշադիր լինելը, ծարահղ անշարժությունը և հանրավոր վալակիտան շատ անզամ խախտում են պետական որգանների ախտունքը: Պետական-կոռպուկարատիվային ապարատի ու նձին ողակները ուղղակի քայլայման են դիմում և միանում են բնակչության բուրժուական-կապիտալիստական տարրերի հետ ու անհրաժեշտ են գալձնում այդ որգանների արմատական զառումը:

Սրա հետ միասին պետք ե հիշել վոր պետական ապարատը՝ ի գիմաց նրա հին շինովնիկական խովի, իր կնիքն և գնում նրա մեջ գործող և կոմունիստական կազմի մի մասի վրա: Կուսակցությունը խիստ

ինքնաքննադատություն ծավալելու լողունգով կոչ և արել բանվորներին և բոլոր աշխատավորներին, անխնա պայքար մղել քայլայման դեպքերի և մեր բոլոր որգանների բյուրոկրատիզմի դեմ: Պրոլետարական ինքնաքննադատությունը համարձակ ու հետեղական կերպով առաջ տանելու համար, անհրաժեշտ ե պետական որգանների աշխատանքի մեջ անմիջապես առաջ քաշել տասնյակ ու հարյուր հազարավոր բանվորներ և գործնականորեն միլիոնավոր աշխատավորներ ներգրավել խորհուրդների ամբողջ աշխատանքի մեջ, վորի համար միաժամանակ պահանջվում է բանվորների և գյուղացիական մասսաների զուլուրական մակարդակի բարձրացումը: Պետական ապարատը իր աշխատանքում բյուրոկրատական տարրերից վճռականապես ազատվելու ձամբով կերթա միայն այն ժամանակ, յերբ պետական գործուղությունների կատարման մեջ այդպիսի մասսայական կերպով կը ներգրավեն բանվոր վասակարգի թարմ ու միաժամանակ լայն կազմերը: Մեր կուսակցության ամենակարևոր անելիքներից մեկը հենց դրա մեջ ե կայանում, քանի վոր նա իսկական դեկավար և պրոլետարական դիմուսուրայի:

Կուսակցությունն այդ հարցում, ինչպես և իր ամբողջ գործունեյության մեջ հենվում է պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների և ամենից առաջ պրոֆմիությունների աջակցության վրա: Վերջինները այս անցած շրջանում շատ մեծ հաջողություն են ունեցել իրենց գործունեյության մեջ և իրապես շարժիչ գլխավոր փոկի (приводной ремень) գեր են խա-

զում կուսակցությունից դեպի բանվորական մասսաները։ Այդ պատճառով ել ավելի մեծ և նրանց պատասխանատվությունը տնտեսության սոցիալիստական վերակառուցմանը աններում պրոլետարիատի առաջ դըրված ամենադժվարին հարցերի իրազործման խնդրում։ Դրա համար մի կողմէց պահանջվում է, փոքր զանազան տեսակի վրա կյալ սպեցիալիստների լայն խավերը մասնակցեն գործի և մյուս կողմից իսկական աշխատավորների միջնավայրը մասսաները նախընթաց Շքանի համեմատ պետք ե ավետք և ավելի շատ մեծ չափով գործոն մասնակցություն ցույց տան սոցիալիստական շինարարության մեջ։

Սակայն մեր մասսայական կազմակերպությունները (պրոֆմիությունները և այլն) հաճախ անհրաժեշտ չափով զգայուն չին բանվորների ու բանվորուհիների կարիքներին ու պահանջներին, շատ դեպքերում հետ են մնում մասսաների ակտիվության աճումից, ուստի և միանգամայն անբավարար չափով են ոպտագործում բանվոր դասակարգի ուժերը, վոտքի հանելու իրենց մեծագույն հնարավորությունները, վորոնցով պետք ե լուծվեն նրանց առաջ զրյած հիմնական խընդիրները և հաղթահարվեն այն գժվարությունները, վոր կանգված են սոցիալիզմի կառուցման հետ։ Պրոֆմիությունների աշխատանքը ամենից ավելի հետ և մնում բանվորների նոր կաղըների նկատմամբ, վորոնք վերջին տարիներս են մտել ֆարբիկներն ու գործարանները և մանափանդակ աշագին ու շարունակ աճող սեղոնային մասսայի, ինչպես և գյուղատնտեսական բանվորների վերաբերմամբ, վորոնց մասսան չի կա-

րազ սոցիալիզմի իսկական կառուցողների շարքերը մտնել, յեթե պրոֆմիություններում պրոլետարական զաստիարակություն չստանան։ Ներկա պայմաններում պրոֆմիությունների և մյուս մասսայական կազմակերպությունների ամենակարևոր հնդիրն եւ անհնապահ գործի մեջ բանվորությունից չինովական կտրվածության դեմ, պայքար թե նրանց կազմոննի ու կոչտ վերաբերվելու ու նրանց կենցաղային շահերի նկատմամբ և թե բանվորության հետամիաց խավերի տրամադրությունների հետ միշտ հարմարվելու դեմ, և առհասարակ ըյուրկրատական ուրիշ բազմաթիվ տարրերի դեմ։ Ինքնաքննադատության լոգունին իրոք անց կացնելու և պրոֆմիութենական գեմոկրատիան ինկառակու ծավալելու հարցում դեռ պետք ե մենք հաջողեցնենք վճռական շարժում առաջ բերելու։

Պրոլետարական մասսայական կազմակերպությունների և մասսավանդ պրոֆմիությունների մեջ յեղած անկու ակցիական լայն ակտիվը պրոլետարական պետության մեջ տնտես կան և կուտուրական շինարարության զանազան ճյուղերի նոր ակտիվ ուժերի նոր զեկավարների մի խիստ կարեոր ու խոշոր շտեմարան և Կուսակցությունը իր գործունեյության մեջ հենվելով ոյլ անկուսակցական պրոլետարական ակտիվի վրա և ամեն կերպ ոգնելով նրա հետզհետե աճմանը, ինչպես և նրա կուտուրական ու քաղաքական զարգացմանը և նրանով հետզհետե լրացնելով կան կողմակերպությունը, խիստ կարեոր մի գործ և իր կողմակերպությունը, խիստ կարեոր մի գործ և կատարում, վոր գեսզի բանվորները եւ ավելի գործոն մասնակցություն ունենան արդյունաբերության

ծաղկման ու ամբողջ սոցիալիստական շինարարության գործում և լուրջ կերպով աշխուժանան մասսայական կազմակերպությունները, վոր իրոք ծափալի պրոլետարական դեմոկրատիան և վերջապես ուրախավոր անհիջապես բազմակողմանի կերպով ամրապնդվեն եւս:

Վերակառուցման շրջանում վոչ միայն պետք է մաքսիմալ չափով ծափակել ամբողջ ինդուստրիան, թե թեթև և թե մասնավոնդ ի ոչորը՝ արմատապես վերաշնելով արդյունաբերությունը և մենաբարձր տեխնիկայով այլ և պետք եւ ամեն կերպ աջակցություն ցույց տայ գլուղացիական ու անհատական տնտեսության բարձրացման և մեր գլուղացիական տնտեսության վերաինստանը՝ բարձրագույն տեխնիկայի և կոլեկտիվիզմի հիմունքով: Սոցիալիստական շինարարության այս ժամանակաշրջանը պրոլետարյան հեղափոխության այն դարագլուխն եւ, յերբ բանվոր դասակարգը գուղացիական մասսաների հետ ամուր կապ ված և գժվարություններն ու ներկարատե անկիթներն հարկավոր կերպով հաշվի առնելով հրապարակ եւ գալիս ամբողջ ճակատով՝ և հետամիաց գյուղի հետ միասին, հիմնովին մաքրելու, դուրս քաշելու կապիտալիզմի այն արմատները, վոր սնունդ են ստանում մանր ապրանքային տնտեսության հողից: Այդ ժամանակ սոցիալիստական տարրերը ճնշում գործ կղըն կապիտալիստական տարրերի վրա, վորի հետեւանքով յերկրի մեջ դասակարգային պայքարի որում:

Քանի վոր իմպերիալիզմը անդադար արտաքին

ճնշում և գործդնում Խորհրդային Միության վրա, ուստի բուրժուա-կապիտալիստական խավերի (կուլակներ, նեալմաններ, բուրժուական ինտելիգենցիա, հակածեղափոխական վասաստուներ) կողմից սրվում է սոցիալիստական շինարարության դիմագրությունը և վորոշ մոմենտներին այս կամ այն տատանումներն և մտցնում եւ մանր-լուրջուական մասսայի մեր դաշնակից շարքերի մեջ: Այդ տատանումներն իրենց ներքին արտացոլումն են ստանում բանվոր գասակարգի պակա, զիմացկուն տարրերի մանր բուրժուական տրամադրությունների մեջ և կուսակցության առանձին խավերի ոպորտունիստական՝ և սմաճայնողական տատանումների մեջ: Տրոցկիստական գաղափարախոսությունն աշխատացնելու փորձերի հետ միասին (վոր մենշևկական տեսակի գաղափարախոսության «ձախ» խոսքով և վարագուրվուծ) այժմ կուսակցության մեջ զգալի կերպով ուժեղացել ե աջ, բացահայտ-հարմարողական վտանգը (վոր տանում և զետի կուսակցական գիրքերի հանձնումը մանր բուրժուական տարրի ճնշման ուակ):

Այդ բանից հետեւմ եւ, թե կուսակցությունը այս ժամանակաշրջանում պետք է առանձին հաստատամտությամբ պայքար մղի յերկու ճակատով՝ բոլշևիկական զինավոր գծից դուրս յերկու տեսակի թերումների գեմ ել և զետի այդ թեքումները յեղած ամեն հաշտողականության գեմ, վոր անպայման խորթ և լենինիզմին: Քանի վոր կուսակցությունը վճռական հաջողաւթյուններ և ունեցել արոցկիզմն հաղթահարելու գործում, ուստի ներկայումս՝ արոցկիստական գաղափարախոսության դեմ ամեն տեսակի պայքարը շա-

բունակելով հանգերձ, առանձին կորեորություն և
ստանում աջ թեքման դեմ պայքարը, վորի դեմ կու-
սակցության մեջ անհաշտ պայքար մղելը պրոլետա-
րական դիկտատորայի դասակարգային թշնամիներին
հարկավոր հականարված տալու կարեորագույն պայ-
մաններից մեկն և և վորով հաջողությամբ կհառաջա-
նանք քաղաքում և գյուղում սոցիալիստական վերա-
կառուցման ուղիղով: Այդ մեծ չափով իրագործելի կը-
լինի, յեթե կուսակցական մասսաների քաղաքական-
գաղափարական մակարդակը շարունակի բարձրանալ,
ինչպես և զեկավար կադրերը տեսականորեն—մարք-
սիստորեն աճեն, համարձակ ու հետևողականությամբ
ծավալի ներկուսակցական դեմոկրատիան և կուսակ-
ցական կազմակերպություններն ամեն կերպ ամրա-
պնդվեն պրոլետարիատի առաջավոր, ակտիվ ու սո-
ցիալիզմին անձնվեր կադրերի նոր հոսանքի հաշ-
վին:

Մշտապես կանգնած լինելով կոմունիստական
ինսերնացիոնալի ավանդարդի, միջազգային պրոլե-
տարական հեղափոխության առաջապահ շարքերում,
մեր կուսակցությունը պետք և այժմ առանձին ուշա-
գրությամբ ստուգե իր աշխատանքն ու վճռական կեր
պով վերացնի իր որգաններում յեղած թերություն-
ները, խեղաթյուրություններն ու քայլայման տար-
րերը:

Միմիայն գեպի ինքն այդպիսի վերաբերմունք
ունենալով միմիայն իր թույլ կողմերն ուղղել ու
խիստ կերպով ստուգելով, իր շարքերն ամրապնդելով
ու զտելով կուսակցությունն ավելի մեծ չափերով ըն-
դունակ կդառնա իր հետեւց քաշելու գյուղի միլիոնա-

վոր բանվորներին ու աշխատավորներին,—ինչպես սո-
ցիալիզմի ակտիվ շինարարների, առանց վարոնց հնա-
րավոր չե յերկրի տնտեսության սոցիալական վերա-
կառուցումը:

Դրա համար անհրաժեշտ է կուսակցական աշխա-
տանքում յեղած չինովուկական մեթոդների և բյուրո-
կրատական սեղմումների գեմ վճռական պայքար մղել
ներկուսակցական դեմոկրատիայի հմտությունի, ուժեղ և
անշեղ կերպով իրականացնել ընտրականությունը,
ուրեմն հետևերար և փոխել ամեն մի քարտուղար և
ամեն մի զեկավար որգան (բյուրո, կոմիտե) համապա-
տասխան կազմակերպության իսկական կամքի:

Դրա համար անհրաժեշտ է, վոր կուսակցական
զեկավար կազմը նշանավոր չափերով ուժեղացնի մաս
աների հետ ունեցած իր կապը: Իսկ այդ անելու հա-
մար անհրաժեշտ է մասնակցել բանվորական ժողով-
ներին, բանվորների ու գյուղացիների առաջ հաշիվ
ներկայացնել իր կատարած աշխատանքի մասին (կու-
տակցական, պրոֆմիութենական, կոռպերատիվային,
տնտեսական), տեղերը գնալ ստորին որգանները գործ
նականորեն զեկավարելու համար, զեկավար զերքերից
անցնել արտադրությունում ու ստորին որգաններում
յերկար ժամանակով աշխատանք կատարելուն և ուժի
դացրած չափերով արտադրությունից նորից կազմել
առաջ քաշել դեպի բալոր որգանների զեկավար աշխա-
տանքները և այլն:

Դրա համար ավելի ևս անհրաժեշտ է ուղղակի
հարվածել կոմունիստական շարքերում յեղած այնպի-
սի յերեսությունն ու խոցերը, ինչպես «կենցաղային
փթածությունն» և, սանձարձակությունն ու արքեցո-

դությունը, «մեծերի» առաջ քծնելն ու շողսքորթությունը, ակներև խայտառակություններն ու բնակչական կուլակային-կապիտալիստական խավերի հետ մեր որդանների առանձին տարրերի հյուսվելը:

Այս բոլորը պահանջում են համարձակ ու անշեղ կերպով կյանքի մեջ մտցնել ինքնաքննադատություն լուսունը և կուսակցական կազմակերպություններում: Վերջիններս այդ կողմից պետք է որինակ հանդիսան: Ուստի քննադատությունը ծավալելուց, —ներքեցից մասսաների ստեղծագործական քննադատությունից առաջացող ամեն մի յերկուողի կուսակցությունը խորտակիչ հականարդած կտա, ինչպես բյուրոկրատիկ մի մի ամենացայտուն յերկույթի:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Կուսակցական կազմի, կուսակցության աճումը բարեւավելու և կուսակցական շարքերը նոր բանվորներ ու բանվորութիւններ ընդունելու հարցին պետք է նայել ներկա ժամանակաշրջանի անելիքների համաձայն:

Վերջին ժամանակներս, մասնավոնդ լենինյան կոչից հետո՝ կուսակցությունն արագ կերպով աճեց: Կուսակցության շարքերը մտան հարյուր ու հարյուր հազարավոր առաջավոր պրոլետարներ, վոր այժմ կրմունխտական դեկավար հիմնաշարքերի մի նշանավոր մասն են կազմում: Կոմունիստ բանվորների այդ նոր հիմնաշարքերը, կադրեն արգեն մի անդամ չե, փոքրիանց բոլշևիկյան տոկունությունն են ցույց տվել

առանձնապես ոպպողիցիայի գեմ կուսակցության մըդղած սուր պայքարի ժամանակամիջոցում և զրա հետ միասին ակտիվ կերպով սոցիալիստական հասարակության կառուցողների շարքերի կարևոր լրացնողներ հանդիսացել:

Յեկ այժմ ել կուսակցությունը զլիավարապես աճում և պրոլետարական կազմի հավին: Դրա հետ միասին աճել է ծառայողների, և մանավանդ գյուղացիների հոսանքը զեսպի կուսակցություն: Բանվորներին բնական կերպով առաջ քաշելով նրանց մի ո՞րոշ մասը արտադրությունից անցն ում և աշխատանքի պրոլետարական պետության որդաններում և ուսմունքի այդ հանգամանքն ել անդրագանում և կուսակցության կազմի վրա: Դրա հետևանքով, չնայելով, վոր կուսակցության մեջ զերակշռում և պրոլետարական կազմը ($61^{\circ}/_0$), այսոււամենայնիվ անմիջականորեն արտադրության մեջ զբաղված բանվորները կուսակցության ավելի պակաս մասն են կազմում ($42^{\circ}/_0$):

Մինչդեռ կուսակցությունը բանվոր դասակարգում աճման ահագին ուղեկերվ պահեստ ունի: Այդ ու զերվերն են պրոֆմիտյուններում, արտադրական խոր բանվորներում, խորհաւրդներում, կոոպերատիվներում, կոմունում, բանվորութիւնների պատվիրակային ժողովներում, կամավոր ընկերություններում, ակումբներում և ուրիշ տեղերում լայնորեն և շարունակ աճող պրոլետարական անկուսակցական ակտիվի հիմնաշարքերը: Արդյունաբերական, և առանձնապես փորակյալ բանվորների առանձին խավերը բուրութին բավարար չափով չեն մտած կուսակցության

մեջ։ Մանավանդ անհրաժեշտ ե վճռական կերպով շարժել բանվորուհիներին կուսակցության շարքերն ընդունելու գործը, վորովհետև վերջին ժամանակներս չափազանց հետ ե մնացել այդ բանը, վոր միանդամայն անթույլատրելի ե ներկա պայմաններում։

Չափազանց մեծ նշանակություն պետք է ունենա արդյունաբերական ձեռնարկություններում կոմսոմոլի լուրջ դպրոցն անցած բանվոր յերիտասարդությանն ուժեղ կերպով գեղի կուսակցությունը քաշելը։ Խիստ հետ ե մնացել գյուղատնտեսական բանվորներին ու բարակներին դեղի կուսակցության շարքերը քաշելը։ այստեղ անհրաժեշտ ե, վոր կուսակցությունն անհապաղ առանց ուշացնելու իր ուշադրությունը դարձնի այդ կողմի վրա։

Բանվորներին ու բանվորուհիներին ուժեղ կերպով անդամագրելու հետ միասին պետք ե ամենախիստ կերպով հետեւ ծառայողներին ու մյուսներին կուսակցության մեջ ընդունելու համար սահմանած պայմաններին, ինչպես և անհրաժեշտորեն ընտրել կուսակցությանը նվիրված գյուղացիներին և նրանցից՝ ամենից առաջ չքափորներին, մանավանդ կոլխոզային շարժման ակտիվ գործիչներին։

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, թե ինչ նպատակներով ե կատարվում բանվորներին կուսակցության շարքերում անդամագրելը, հետեւ բար և ի նկատի ունենալով սոցիալիտական վերակառուցման ժամանակաշրջանի հիմնական խնդիրներն, անհրաժեշտ ե կուսակցության շարքերն ընդունել բանվոր դասակարգի այն առաջավոր տարրերը, վորոնք ընդունակ են գնալու բանվոր մասսայի ավանդարդում։

Սոցիալիտական շինարարությունները դորձնականորեն հաղթահարելու, մանր-բուրժուական յերերութիւններին հակահարված տալու, բանվորների և դյուդի աշխատավոր բոլոր մասսաների շարքերում դեպի կուսակցությունը վստահություն առաջացնելու ռեզիստ:

Մեր անելիքն ե հանդիսանում—ամենահամառ ու կտրուկ կերպով գեղի կուսակցության շարքերը քաշել այն բանվորներին ու բանվորուհիներին, վորոնք դժվարությունների ժամանակ քաղաքական ամենամեծ տոկունություն են ցույց տալիս, իսկական պրոլետարական ինտերնացիոնալիստներ են հանդիսանում, անձնական որինս-կով նպաստում են արտադրականության աճմանն ու աշխատանքային դիտցիներին, ջերմ ու համառ կերպով կովում են բյուրոկրատիզմի դեմ, ակտիվ կերպով աշխատում են իրանց կուլտուրական զարգացման համար և հենց դրանով ել ընդունակ են ամրապնդելու պրոլետարական ավանդարդի լենինյան շարքերը։

Կուսակցությունը չի կարող հաշվի չառնել այն հանգամանքը, վոր հենց պրոլետարիատի կազմը պատերազմի ու հեղափոխության տարիներում նշանավոր չափերով լրացվել ե նոր, մանավանդ գյուղից յեկած տարրերով, ապա և քիչ չափով և ուղկակի բանվոր դասակարգին խորթ սոցիալական միջավայրից։ դուրս յեկած մարդկանցով։ Ապա ուրեմն ավելի մեծ հիմունք ներսի կուսակցության իր կազմակերպությունների մեջ պետք ե Հավաքե պրոլետարների բոլոր հեղափոխական-դիմունից և սոցիա իզմին նվիրված տարրերը, առանձնապես խոշոր արտադրությունում աշխատանքի

մեծ ստաժ ունեցող բանվորներին ու բանվորուհիներին: Մեզ համար գործնական խնդիր և հանդիսանում այնպես անել, վոր վոչ ուշ քան 1930 թվի վերջը կու սակցության կազմի վոչ պակաս քան կեսը բաղկացած լինի արտադրության բանվորներից:

Բանվորներին լայնորեն գետի կուսակցությունը քաշելու գործը պետք է միացած լինի կուսակցության ներկա կազմը խիստ կերպով ստուգելու և ամենավճռական կերպով այլ կազմը սոցիալապես խորթ, ներս սոլոսակած, բյուրոկրատացած ու քայքայված տարրերից զուրկու աշխատանքը: Մի կողմից անհրաժեշտ են ամեն տեսակ և մանավանդ կովի գաղափարական միջոցներ ձեռք առնել, վոր կուսակցությունից դուրս չգան ավելի հետամնաց, բայց հեղափոխությանը նըղիրված բանվորները: Մյուս կողմից հարկավոր և ուժեղացրած և վերջին տարիների համեմատությամբ և ավելի հաստատուն միջոցներ կուսակցական կազմակերպությունները զտելու վերաբերմամբ, դուրս քշելով այնտեղից այն տարրերը, վոր կառավարող կուսակցության մեջ լինելն սպասարկում են իրենց շահատիրական կարյերիստական-պաշտոնամոլական նըղատակներն առաջ տանելու համար, ինչպես և կուլակության հետ հյուսված բուրժուա-մեջանական այլակերման տարրերին և այլն:

Գյուղացիական կազմակերպությունների կազմում գեռ ըոլորովին աննշան և արովետարական տարրերի տեսակաբար կշիռը, նշանակությունը և ուղղակի չնշին և կոլխոզնիկների կադրը: Դրա հետ միասին՝ վորոշ գեղքերում նրանց կազմի մեջ նշանավոր և ունեոր գյուղացիների, յերեմին և կուլակությանը մոտե-

ցած, քայքայված, բանվոր գասակարգի համար բոլորովին խորթ տարրերի չափը: Այս հանգամանքը պահանջ և դնում անհնատագել ի կերպով, վճռականորեն բարելավել, արմատապես զտել և նշանակության չափերով նորոգել այդ կազմակերպությունները: Ազգային հանրապետություններում ու շրջաններում, վորտեղ պրոլետարիատի կազմերը գեռ մեծ չեն, մանավանդ տեղական ազգություններից բատրակներ ու գյուղատնտեսական բանվորներ ներս քաշելը, ինչպես և կազմակերպությունների սոցիալիստական կազմի համապատասխան բարելավումը սոցիալիստական շինուարության վճռական պայմաններից մեկն և հանդիսաւում:

Ինչպես ուժեղացրած կերպով բանվորներ անդամագրելու, նույնպես կուսակցությունը գաղափարապես և սոցիալապես խորթ տարրերից վճռականապես զըտելու համար անհրաժեշտորեն պետք է ներս քաշել անկուսակցական բանվորների լայն մասսաները: Անկուսակցական բանվորների, իսկ գյուղում անկուսակցական գյուղացիների, մանավանդ բատրակների ու չքավորների այդ մասնակցությունը պետք է իսկապես ակտիվ, իսկապես մասսայական լինի: Կուսակցության համար աշխատավորների անկուսակցական մասսայի այդ ոգնությունը բացառիկ խոշոր նշանակություն ունի, ինչպես կարեռագույն ոգնություն սոցիալիստական շինարարության ամբողջ գործին, վորին գլուխ և կանգնած կոմունիստական կուսակցությունը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Այնպես անել, վոր վոչ ուշ քան 1930 թվի վերջը կուսակցության կազմի վոչ պակաս քան կեսը

մասսաներում՝ կուլտուրական աշխատանքի ծավա-
լումը:

10. Կուսակցական որդանները, կենտրոնական
կոմիտեն ել հետք պիտք և սիստեմատիկ կերպով ստու-
գեն տեղական կազմակեր զությունների համապատաս-
խան աշխատանքը, տեղական պրակտիկայում անհա-
մեշտ ուղղությունը մտցնել ու կուսակզմակերպություն-
ների առաջ մամուլի մեջ լուսաբանել ամբողջ գործի
հետեանքները:

11. Առաջավոր բանվարների նոր լայն կաղըեր
կուսակցության մեջ ընդունելու գործը և ամե-
նաանիզելի կերպով կապահած լինի պրոլետարական
գեմոլրատիան խորհուրդների, պրոֆմիությունների և
կուսակցության գծով վճռական ու հետեղական կեր-
պով ծավալելուն հետ, հետեաբար և բոլոր որդաննե-
րում բյուրոկրատիզմի դեմ գործնական պայքարն ա-
մեն կերպ ուժեղացնելու հետ՝ կենտրոնական կոմի-
տեի այն վորոշման ու ինքնաքննազատության մա-
սին հունիսյան պլենումի հիման վրա:

ՅՐԹԺԱՄՅԱ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾԱ- ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Բանաձեկվ ընկ. Շմիդտի գեկուցման առքիվ ընդունված
միաձայն Համ. Կ (Բ) Կ Կենտրկոմի պլենումի կողմից
1928 թվի նոյեմբերի 24-ին).

ԽՍՀՄ կենտրկոմի մանիքեսուր, վարչ ապահո-
վում և առաջիկա տարիների ընթացքում գործարանա-
յին արտադրական բանվորների ութժամյա բանվորա-
կան որից յոթժամյա բանվորվա անցնելը՝ ուսուց աշ-
խատավարձը պակասեցնելու, —վճռական մի քայլ և
դեպի ՀԱՄԿ (Բ) և ծրագրի այն կետի իրականացումը,
վորպիսին՝ աշխատանքի ընդհանուր արտադրողա-
կանության բարձրացման պայմաններում՝ նպատակ և
դնում առ առավելն վեցժամյա բանվորական որ սահ-
մանել՝ առանց աշխատավարձի պակասեցնելու և վոր-
պիսին իր զիկտատուրայի յիրկում հաջողությամբ
սոցիալիզմ կառուցանող բանվոր դասակարգի համար
կարևորագույն մի նվաճում և հանդիսանում:

Բացի այն կտրեորակույն սկզբունքային նշա-
նակությունը, վոր ունի 7-ժամյա բանվորական որը
բանվոր գասակարգի աշխատանքի պաշտպանության
և նրա կուլտուրական մակարդակի համար, —այդպի-
սին միաժամանակ և հսկայական կարևորություն ու-
նեցող տնտեսական մի խաղիք և, վոր բացառիկ ու-
շաղըություն և պահանջելու բանվոր դասակարգի ա-

մենալայն մասսաների, կուսակցության, արհմիությունների և տնտեսական մարմինների կողմից:

Յոթժամյա բանվորական որփա սահմանումը մի ավելորդ անգամ ևս գործիք և ընդգծելու խորհրդային տնտեսության եկոնոմիկայի առանձնահատկությունը և նրա ռացիոնալիզացիայի սոցիալիստական ընույթը, վորի նպատակն եւ—ըստ ամենայնի և անշեղորեն բարելավել բանվոր դասակարգի տնտեսական վիճակը և կուլտուրական աճումը և վորապիսին զուգորդվում և բանվոր դասակարգի գրության անմիջական բարելավման՝ վորպես տարբերություն կապիտալիստական սիստեմի և նրա ռացիոնալացման մեթոդներից, վորոնք հենված են բանվոր դասակարգի շահուգործման, ձնշման և նրա տնտեսական վիճակի ել ավելի վատթարացման վրա (բանվորական որփա յերկարացումը, աշխատավարձի իջեցումը և այլն)։

Յոթժամյա բանվորական որփա իրազործելու փորձը տեքստիլ արդյունաբերության ասպարիզում՝ չնայած այն մի շարք թերություններին, վոր նշված են կենտրոնի 1928 թվի մայիսի 20-ի վորաշման մեջ՝ մի շարք տեքստիլ ձեռնարկությունները՝ 7-ժամյա բանվորական որփա անցկացնելու նախնական արդյունքների վերաբերյալ,—ատլացում ե, վոր այդ թերությունների վերացմամբ յոթժամյա բանվորական որը կապահովի արտադրության ընդարձակումը, բանվորների նոր կագերի գրավումը և այդպիսով կթուլացնի գործազրկության աճումը, կապահովի արտադրողական ուժերի և աշխատավարձի հետագա զարգացումը, այլ և բանվոր դասակարգի կուլտուրական մակարդակի ավելի արագ բարձրացումը:

Նպատակ դնելով վերացնելու այն թերությունները, վորոնք արտահայտվել են յոթժամյա բանվորական որփա կիրառման ժամանակ մի շարք տեքստիլ ձեռնարկություններում և վորոնց թվում գլխավորներն են հանդիսանում։

ա) Ծայրաստիճան անբավարար բացատրական աշխատանքը յոթժամյա բանվորական որփա նշանակության մասին, ընդ վորում բանվորական լայն մաս սան, վորպես կանոն, չեր զրավում 7-ժամյա բանվորական որփա դիմելու գործնական պայմանները մշակելու գործի մեջ։

բ) Իրենց իսկ ձեռնարկությունների կազմակերպչական տեխնիկական անպատրաստությունը։

գ) Բավկանաչափ վորակյալ և խտացված աշխատանք կատարելու համար պատրաստված բանվորական ուժի և փորձված տեխնիկական պերսոնալի պակասությունը։

դ) Նոր ներդրավվող բանվորների անբավար կարգապահությունը։

յե) Զեռնարկությունների խոշոր մասի անպատրաստությունն աշխատանքի նորմալ պայմաններ ստեղծելու տեսակետից (լուսավորություն, ողափոխություն, ապահովության տեխնիկա և այլն)։

զ) Կենցաղային պայմանների վատթարացումը (բնակարանների պակասությունը, հանրակացարաններում ապրողների խտացածությունը, այլևայլ հաստատությունների կողմից սպասարկության հարմարեցված չինելը՝ բանալուների լրացուցիչ փոխի ժամանակ, —մասուրները, հիվանդանոցները, եւեքտրաքարշը, կոռպերատիվները և այլն)։

ը) կուսակցական, արհեստակցական և խորհրդային կազմակերպությունների կողմից բանվորական մասսայի սպասարկելու վատթարացումը:
Պլենումն անհրաժեշտ է համարում:

1. Վարտավորեցնել կուսակցական և տնտեսական մարմիններին և, առաջին հերթին, արհմիություն ներին ձեռնարկություններում այնպիսի ձևով կազմակերպել մասսայական աշխատանքը, վոր ձեռնարկությունները յոթժամյա բանվորական որը փոխանցելու ամրողնախապատրաստական աշխատանքին բանվորներըն իրազեկ լինեն և վոր այդպիսին կատարվի բանվորների ակտիվ մասնակցությամբ, այլ և ուժեղացնել կուլտուր-լուսավորական աշխատանքը, հարմարեցնելով այդպիսին ձեռնարկություններում կատարվող աշխատանքի նոր պայմաններին:

2. Առաջարկել Գերժողունակիորհին բոլոր միջոցները ձեռք առնելու, վորպեսզի գործնականապես յոթժամյա բանվորական որվան անցնելուց առաջ նախապատրաստական աշխատանքը կատարվի, վորպիսին պետք է ապահովի արդյունարերական ֆինանսնի կողմից ուրվագծված արտադրության անընդհատում և վորակային բարելավումը (հումնյութով ապահովելը, լրացուցիչ սարքավորում դնելը, ինքնարժեքի իջեցումն, համապատասխան վորակավորում ունեցող բանվորական ուժով և տեխնիկական պերսոնավ ապահովելը):

3. Նմանապես և այն բոլոր տնտեսական մարմինները, վորոնց անորինության ներքո յոթժամյա բանվորական որվան անցկացնող ձեռնարկություններ կան, պարտավոր են ձեռք առնել բոլոր միջոցները,

վորպեսզի յոթժամյա բանվորական որվավ աշխատող ձեռնարկություններն ապահովված լինեն կապիտալ աշխատանքների ժամանակին կատարված ֆինանսավորմամբ:

4. Կենտրկումն առաջարկում և Աշխաղարկոմատին և Կենտրկումբանկին, վոր բնակաշինարարության վարկերը բաշխելիս՝ առավելապես լրիվ չափով բավարարվի այն ձեռնարկությունների բանվորական բնակարանային շինարարությունը, վորոնք փոխանցվում են յոթժամյա բանվորական որվա և առանձնապես այնտեղ, վորակեղ լրացուցիչ հերթափոխություն և սահմանվում:

5. Առաջարկել Աշխաղարկոմատին՝ Գերժողունակիութիւն հետ միասին ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները՝ աշխատանքի պայմաններն առողջացնելու համար այն ձեռնարկություններում, վորոնք փոխանցված են յոթժամյա բանվորական որվա և առաջին հերթին լրացուցիչ հերթափոխություն ունեցուղ ձեռնարկություններում, ապահովելով այդ միջոցների կերպառումը համապատասխան հատկացումներով ըստ արդինապես:

6. Առաջարկել Աշխաղարկոմատին, Գերժողունակիութիւն և ՀԱՄԿԵ-ին իրագործել այն վորոշումը, վոր վերաբերում և հղի և ծծկեր յերեխաններին կերակրող կանանց գիշերային հերթի աշխատանքից աղատելուն յոթժամյա բանվորական որվա փոխանցված ձեռնարկություններում: Միաժամանակ պարտավորեցնել բոլոր տեղական կուսակցական կոմիտեներին, վոր նըրանք բանվորուհների շրջանում բացատրական

լայն կամպանիա մղեն՝ հիշյալ վորոշումն անցկացնելու համար:

7. Առաջարկել դաշնակից հանրապետությունների ժողկոմիսորներին, վոր նրանք պարտավորեցնեն լուսժողկոմատներին և Առժողկոմատներին ուժեղացնելու այն բոլոր ձեռնարկումները, վոր յոթամյա բանվորական որվա փոխանցված ձեռնարկություններում սպասարկում են բանվորների կենցաղային և կուլտուրական պահանջներին (մսուրները, հիվանդանոցները, դպրոցները), ապահովելով այդ ձեռնարկումների կենսագործումը անհրաժեշտ հատկացումներով:

Յոթամյա բանվորական որվա անցնելու դեպքում, առանձնապես կարեոր նշան կություն և ստանում բանվորական ուժ պատրաստելու հարցը: Յոթամյա բանվորական որվա հաջող կիրառումը կապված է ավելի բարձր տեխնիկայի, արտադրության նոր մեթոդների և աշխատանքի ավելի բարձր կազմակերպություն մտցնելու հետ, վորն իր հերթին բանվորից պահանջում է ավելի կուլտուրական վերաբերմունք ցուցաբերել աշխատանքին, վճռարար արմատախիլ անել աշխատանքի արդյունավետ գործադրությունը, աշխատանքի ավելի մեծ թափ և արտադրական կարգապահություն: Յենելով դրանից ժօղովներին, Արհլուագլխարին և Աշխատադկոմատին սուջարկում է աշակերտների արտադրական ուսուցման ու բանվորների վերապատրաստման աշխատանքը կազմակերպել այնպես վոր նրանք կարողանան յուրացնել աշխատանքային ուսուցիչնալ նոր վարժությունները՝ հիմնելով այն գիտական նվաճումների վրա, վոր ձեռք են բերել Աշխա-

տանքի կենտրոնական ինստիտուտը և աշխատանքի գիտական ինստիտուտները և ապահովության նոր տեխնիկան:

Առանձնապես կարեոր նշանակություն տառով ֆորգործկոմի միջոցով բանվորական ուժ պատրաստելու գործին, առաջարկել Արհլուագլխարին և ժօղովների ավելի հարմարեցնել ֆարբործկոմների աշխատանքն արդյունաբերության պահանջներին, այն ե՝ աշխատանքի ավելի կատարելագործված յեղանակներին, տիրապետող վարակյալ բանվորական ուժի պահանջներին:

Դրա հետ միասին առաջարկել կուսադողություն ուժեղացնել թե տարրական կրթության և թե արդյունաբերական ձեռնարկություններին կից յոթնամյակների ցանցի զարգացումը, նպատակադրելով բարձրացնել բանվորների ընդհանուր կրթությունը և կուռուրան:

Կե-ի պլենումը հավանություն է տալիս արդյունաբերության և տրանսպորտի մեջ յոթ-ժամյա բանվորական որ մտցնելու ընդունված տեմպին (1928—29 տարում մոտ 20 տոկոս, իսկ 1929—30 տարում առն վազն 20 տոկոս), վորը կապահովի առաջիկա հնգամյակում ամբողջ արդյունաբերության և արանսպորտի մեջ յոթ-ժամյա բանվորական որ մտցնելու գործը:

Հիմնականում հավանություն տալով յոթամյա բանվորական որվա անցնող ձեռնարկությունների այն ցուցակին, վոր ընդունել և ժողկոմիսորներ՝ յոթ-ժամյա բանվորական որվա անցնելու միջոցներ մշակող կառավարական հանձնաժողովի գեկուցման առ-

թիվ, պլենումն անբավարար և դանում ծանր արդյունաբերության յոթ-ժամյա բանվորական որփա անցնելը և տռաջարկում ե, զոր հանձնաժողովը ժջիկին առաջարկի մշակել յոթժամյա բանվորական որփա անցնելու հագամյա պերսպեկտիվ պլանը և համաձայնեցնել վերջինս արդյունաբերության զարգացման ու արդյունաբերության առանձին ճյուղերի վերակառուցման հագամյա պլանի և կապիտալ շինարարության հետ: Յոթ-ժամյա բանվորական որք, բացի նրա տընտեսական նշանակությունից, կուլտուրական մի կարևոր նախադրյալ համարելով բանվոր դասակարգի կուլտուրական մակարդակի բարձրացման, կերպումը կուսակցական, արհմիութենական, տնտեսական և խորհրդային կտղմակերպությունների տմինատառաջին և հիմնական խոդին և համարում յոթ-ժամյա բանվորական որփա անցնելու աշի ատանքը կազմակերպել այնպես, զոր յոթ-ժամյա աշխատանքի անցնելու հետևանքով բանվորների ազատ ժամանակը ոգտագործվի ել ավելի զարկ տալու բանվոր դասակարգի կուլտուրական և տնտեսական նվաճումներին: Ել ավելի ուժեղացնելու բանվորների մասնակցությունը պետական կառավարման գործին, մի հանգումոնք, վորք միջազգային հակայական նշանակություն, ևնի բանվոր դասակարգի հանուն իր լիտակատար ազատագրման մղած պայքարի համար:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ ՅԵՎ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

(Համկարակութիւն Կենտրկումի պլենումի բանաձեվի, ընդունված միաձայն Հյուսիսային Կոմիսարի Յերկրային Կոմիտեի գեկուցման առքի նոյնութերի 28-ին).

Լսելով Հյուսիսային Կոմիսարի Յերկրային Կոմիտեյի գեկուցումը՝ գյուղում տարած աշխատանքների մասին, կենտրկումի պլենումն այդ աշխատանքը համարում և բավարար և հիմնականում հավանությունը և տալիս գյուղատնտեսությունը զարգացնելու նպատակով նրա կողմից ընդունված վարոշումներին:

1. Հյուսիսային Կոմիսարի գյուղերի քաղաքական և տնտեսական վիճակի ստուգումը ցույց և տալիս, զոր վերջին բոլոր տարիներն ել անցել են գյուղատնտեսությունը վերականգնելու ցանքսերի տարածությունը 1922 թվի 51 տոկոսից հասել ե 88 տոկոսի 1927 թվին, անսառները 1922 թվին կազմել են 44 տոկոս, 1927 թվին 72) և մեր դասակարգային դիրքերը հետագայում ավելի ևս ամբացնելու նշանի տակ: Դրան իբրև ապացուց ծառայում են հետեալ փաստերը. ա) կոռպերացման մեծ թափը գյուղում, բ) կոլտնտեսությունների շինարարության աճումը և գ) չքաղորության տնտեսական և կազմակերպչական ամրապնդումն ու միջակի հետ ունեցած դաշինքի ուժեղացումը: Սակայն մեր դասակարգային դիրքերի ամրապնդման ու զյուղի սոցիալիստական տարրերի աճ-

ման հետ միասին գյուղատնտեսության ընդհանուր վերելքի փոնիք վրա ակտիվացել և ամրաց' և են նաև կապիտալիստական տարրերը, վորոնք պայքար են մը դում, վորպեսզի սոցիալիզմը չթափանցի գյուղը։ Այդ պայքարն իր առանձնապես ցայտուն արտացոլումը գտավ կուսակցության և Խորհրդային իշխանության կողմից գյուղամ տարվող կամպանիաների (հացամըթերումներ, գյուղնարկ, սերմանման աշխատանք, ընտրություններ և այլն) կապակցությամբ սրվող դաստկարգային պայքարում։

Պլենումը Յերկրային կոմիտեյին առաջարկում և աշխատանքների ընթացքում յելնել այն հանդամանքներից, վոր անհրաժեշտ է հետագայում ավելի յեվս ամրապնդել պրոլետարիատի դասակարգային դիրքերը գյուղում յեվ ել ավելի սահմանափակել կալիսալիսական յեվ կովակային տարրերին, անդադրում աշխատել գյուղատնտեսության մեջ սոցիալիստական տարրերին ընդարձակելու ուղղությամբ, մեր հենարան չքավորությունը կուսակցության, խորհուրդների և կոոպերացիայի շուրջը կազմակերպելու և գյուղացիության միջակ խավերի հետ ունեցած դաշինքն ամեն կերպ ամրապնդելու միջոցով։

2) Դրա հետ միասին կենտրկոմի պլենումն արձանագրում է, վոր Հնայած գյուղատնտեսությունը վերականգնելու գործում ձեռք բերած հաջողություններին, վորոնք հետեւանք են կուսակցության և Խորհրդային իշխանության որպանների վերջին մի շարք տարրերում կատարած աշխատանքի, այնուամենայնիվ այդ հաջողություններն այնքան ել բավարար չեն կարող համարվել այն դերի համեմատությամբ,

վոր Հյուսիսային կովկասը պետք է խաղար յերկրի բռվանդակ տնտեսության հաշվեկշուի մեջ։

Այն փաստը, վոր ցանքերի փաստական տարածության ընդհանուր քանակը Հյուսիսային կովկասում ցածր է միջակից ամբողջ ԽՍՀՄ համեմատությամբ և կազմում է մինչպատերազմյանի միայն 88 տոկոսը, վոր գաշտաբուծության ընդհանուր բերքը հասնում է միայն մինչպատերազմյանի 57,2 տոկոսին և, վոր առանձնապես ծանր է հացահատիկային մշակույթների ապրանքայնության աստիճանը՝ հարկադրում է ընդունել վոր Հյուսիսային կովկասի գյուղատնտեսությունը չափազանց ծանր դրության մեջ և գտնվում։

Գյուղատնտեսության վերականգնման պրոցեսի հիմնական գժվարությունների կանխորոշ պատճառները հանդիսանում են. — ա) այն, վոր Հյուսիսային կովկասն ավելի ուշ գուրու յեկալ քաղաքացիական կովի շրջանից և վոր գյուղատնտեսությունը համեմատած մյուս ռայոնների հետ, ավելի շատ քայլքայվեց իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների ժամանակ, բ) վոր տնտեսությունները մանրացել են, դա հիմնականում բղխում է այն հանդամանքից, վոր հող և հատկացրված ահազին քանակությունն կազմող յեկվոր, հող չունեցած բնակչության, գ) վոր մինչպատերազմյան ըլքանում հողագործությունը տարվում եր եքստենսիվ և հողն ուժապառող յեղանակով և գեռ այն ժամանակ արդեն յերեան եին գալիս բերքատվության անկման նշաններ, դ) վոր տնտեսությունն ապահոված չեր գյուղատնտեսական ինվենտարով և լծկանով, յե) վոր վերջին յերկու աարվա ողերեսութարանական պայմանները յեղել են անբարենպաստ։

3. Հուսիսային կովկասի բացառիկ նշանակությունը կայանում ե նրանում, վոր նրա բնական ու տնտեսական պայմանները բարենպաստ են հողագործության համար, յերկաթուղային և ջրային հանապարհների մոտիկությունը լայն հնարավորություն ե տալիս ոգտագործելու այդ ուսունը յերկրի հացահատի կային խնդիրը լուծելու համար՝ թե ներքին հացամատակարարումն ապահովելու և թե արտահանությունը ընդարձակելու տեսակետից:

Յենելով Հյուսիսային կովկասի այդպիսի բացառիկ գրությունից, պլենումը ծողկոմխորհին հանձնարարում ե մշակել մի շարք այնպիսի միջոցներ, վարոնք մոտակա մեկ-յերկու տարում կարողանային վճռական բեկում առաջ բերել Հյուսիսային կովկասի զյուղատնտեսության վիճակի մեջ այն մտքով, վոր ա) բերքատվությունը բարձրանա, բ) արագ թափով ընդարձակվի ցանքսերի տարածությունը՝ թե զյուղացիական տնտեսությունների և թե համայնացված մասի (խորհրդային տնտեսություններ, կոլտնտեսություններ) գծով. գ) ավելանա գյուղատնտեսության և մանավանդ նրա հացահատիկային ճյուղի ապրանքայնությունը. դ) ապահովի գյուղացիական ցանուցիք մանր տնտեսությունները համայնացնելու շարունակ աճող թափը:

Նկատի ունենալով տրակտորի առանձին նշանակությունը գյուղատնտեսության արդասավորությունը և արտադրականությունը բարձրացնելու, նրան ինդուստրիացման յենթարկելու և ամրապնդելու, նույնպես և կոլտնտեսությունների շինարարությունը ընդարձակելու գործում, կանոնորշելով վոր յերկու արտ-

վա ընթացքում Հյուսիսային կովկաս պետք ե ներմուծվի վոչ պակաս, քան 10,000 տրակտոր: Նույն ժամանակամիջոցում ապահովել այդ յերկրի պահանջները սերմնացան և սերմագտիչ մեքենաների վերաբերմամբ. այդ մեքենաները մատակարարել գլխավորապես կոլտնտեսությունների գծով և կազմակերպելով սպասարկող բազաներ խորհրդային տնտեսություններին կից և գարձկայաններ կոռպերացիային կից: Միևնույն ժամանակ ապահովել գյուղատնտեսական մեքենաներ ձեռք բերելու արտոնյալ պայմաններ՝ չըքավոր և միջակ գյուղացիական, անհատական տնտեսությունների համար: Նույն նպատակներով ապահովել այդ շրջանում հողաշինարարության արագացումը այն հաշվով, վոր այդ հողաշինարարությունը հիմնականում վերջանա հինգ տարուց վոչ ուշ:

4. Այդ ձեռնարկումները պետք ե գործածվեն այնպես, վոր ընդհանուր աշխատանքի բարեկավման հետ զուգընթաց անպայման ավելանա մեր կուսակցական, խորհրդային և կոոպերատիվ որգանների կազմակերպչական և տնտեսական գերել՝ գյուղատնտեսությունը կազմակերպելու գործում:

Այդ կազմակերպությունների անմիջական պարտականությունը պետք ե լինի այն, վոր նրանք ժամանակին պատրաստվեն սերմանման և բերքի հավաք մաս կամպանիաներին, ուժեղացնեն կամպանիաների կազմակերպիչ գերեն այդ գործում և ցանքսերի տարածությունն ավելացնելու ու բերքատվությունը բարձրացնելու ինդրում աշակեցն չքավոր ու միջակ մասներին: Գյուղատնտեսության բարձրացման գործին ցույց տված իրենց ուշադիր մասնակցությամբ ու ա-

ջակցությամբ գյուղի հետ կապված մեր կազմակերպությունները պետք եւ ապահովեն ազրոնոմիական մի շարք այնպիսի ձեռնարկություններ (հերկելը, սերմացուն զտելը, ժամանակին ցանելը, մրրիկի դեմ կովելը և այլն), վորոնք ահազին նշանակություն ունեն իրենց անուիջական հետեանքի տեսակետից՝ գյուղատնտեսության բերքատվությունն ու ապրանքայնությունը բարձրացնելու, չքավոր և միջակ մասսաների լայն հասարակայնությունն այդ ձեռնարկությունների շուրջը ծավալելու և հենց իր՝ ազգաբնակչության միջացներն այդ գործի մեջ զբավելու խնդրում:

Հյուսիսային կովկասում սերմանման կամպանիա մղելու գործին կուսակցության և Խորհրդային իշխանության կողմից այս տարի ցույց տրված մասնակցության որինակը նշում ե, թե քաղաքական ու տրնտեսական ինչ ահազին նշանակություն ունի այն չքավորությունը համախմբելու, մեր կապը և ազգեցությունը միջակ մասսաների վերաբերմամբ ամրացնելու տեսակետից, վոր անհրաժեշտ և իսկապէս պայքարելու համար կապիտալիստական տարրերին գյուղացիական հիմնական մասսայից կարելու նպատակով:

Գյուղի հետ կապված մեր կազմակերպությունների աշխատանքի պրակտիկայի նշանակության այդպիսի ձեռփոխությունը յենթադրում ե, այդ կազմակերպությունների զեկավարող կադրերի գյուղատնտեսական գիտելիքների բարձրացման անհրաժեշտությունը:

Այդ պատճառով պլենումը հավանություն ե տալիս Հյուսիսային կովկասի Յերկրային կոմիտեյի ա-

ռաջին փորձին, վոր նողատակ ունի ազրոնոմիական կազմակերպել զյուղական և ուղյոնական դեկավարող աշխատողների համար, պլենումը Յերկրկոմին հանձնաբարում և ընդլայնել այդ փորձը, նողատակ դնելով այդ ուղղությամբ տարրական պատրաստություն տալ պյուղական, ուղյոնական և ընդանային աշխատողների ամբողջ կազմին:

5. Նկատի աւնելով այն առանձին նշանակությունը, վոր ունի գյուղատնտեսությունը գրագետ ազտունումիական ուժերով ապահովելու խնդիրը, պլենումն անհրաժեշտ և համարում մշակել մի շարք միջոցներ գյուղական գլացիներում ազրոնոմիական կրթություն լայնացնելու համար:

Մեծացնել գյուղատնտեսի գերը, վորպես գյուղատնտեսության կազմակերպչի, հանձնարարել ժողկություններում մշակելու մի շարք միջոցներ թե այդ և թեխորհին մշակելու միջոցներ թե այդ և թեխորհին մշակելու միջոցներ նյութական գրությունը բարեկավելու ուղղությամբ:

6. Թե խորհրդային ու կոլեկտիվ տնտեսություններում և թե գյուղացիական անհատական տնտեսություններում արտադրական կարգով ազրոնոմիական վորոշ պայմաններ ստեղծելը համարել ճիշտ: Սակայն կարևոր միջոցն իրադրություն համար՝ համապատասխան խորհրդային և կոոպերատիվ որգանների տարրերի նախորդը պետք ե տարվի նախապատրաստական կամ լուրջ աշխատանք և ապահովի գյուղացիական լայն մասսաների աջակցությունը:

7. Գյուղատնտեսության բարձրացման թափի ուժեղացման խնդրի գծով կոոպերացիայի աշխատանությունը պլենում հատուկ նշանակություն ե ստանում:

Այն փաստը, վոր կոռպերացիան գյուղական շուկայից նշանակալից չափերով վտարել և մասնավորներին, վոր սպառողական և գյուղատնտեսական կոռպերացիան քանակով աճել են ահազին չափերով (Հյուսիսային Կովկասի որինակը), ցույց ե տալիս վոր կոռպերացիան խակապես ունեցել ե հակայական, անկասկածելի հաջողություններ: Սակայն միմիայն քանակային հաջողությունները դեռևս բոլորովին բավական չեն:

Անհրաժեշտ ե հատուկ ուշագրություն նվիրել կոռպերատիվ որգանների աշխատանքի վորակին գյուղում և այն հանգամանքին, վոր կոռպերացիան կարողանա գյուղացիական տնտեսության հիմնական մասսաներին ավելի մեծ չափով առնել իր կոռպերատիվ շրջանառության մեջ և կապված լինի գյուղացիական կոռպերատիվ տնտեսության արտադրության ամբողջ պլրոցեսի հետ: Այդ տեսակետից առանձին նշանակություն և ստանում գյուղատնտեսական կոռպերացիան, վորի հիմնական թերությունը շարունակում ե մնալ չափազանցրած առեւրական թեքումը, փոխանակ այն բանի, վոր նա ավելի ու ավելի վերածվի գյուղատնտեսական արտադրության անմիջական կազմակերպչի: Կոռպերացիայի կարևորագույն գործնական խնդիրները գյուղում՝ արտադրական կոռպերացման գործում, պլենումը համարում ե կոնտրակտացիայի սիստեմի լայնացնելը կարձատե կոնտրակտացիաներից յերկարատե կոնտրակտացիաներին անցնելը, կոռպերացված ազգաբնակչության միջոցները կոռպերատիվ շրջանառության մեջ առնելը, գյուղացիական տնտեսության

ըստ նրա առանձին մասերի (սպեցիալիզացիա) ավելի լայն կերպով սպասարկելը և այլն:

8. Կուսակցության, խորհուրդների և կոռպերացիայի գծով աշխատանքը գյուղում բարելավելը, նըրանց ղեկավարող և կազմակերպիչ ղերը գյուղատնտեսության մեջ բարձրացնելը պետք ե այնպես կատարվի, վոր միաժամանակ ուժեղանա գյուղացիության չքավոր և միջակ մասսաների լայն հասարակայնությունը խորհուրդների կոռպերացիայի և այլ հասարակական կազմակերպությունների շարչը: Անհրաժեշտ է ջանք թափել, վոր թե բերքատվության բարձրացման և թե հողաշինարարության գործում ցանքսերի տարածությունն ընդարձակելու համար կիրառվող յուրաքանչյուր ձեռնարկում ապահովված լինի գյուղի աշխատավորական մասսաների լայն աջակցությունը, կազմակերպչական գանազան ձեռքով պետք ե նաև հետամուտ լինել, վոր տնտեսությունը բարձրացնելու համար այս կամ այն ձեռնարկումի կիրառման ժամանակ ապահովված լինի չքավոր-միջակ մասսաների անմիջական մասնակցությունն այդ գործին: Այդ տեսակետից պլենումը հավանություն է տալիս այն փորձին, վոր կատարել և Հյուսիսային Կովկասի Յերկրային կոմիտեն գյուղխորհուրդներին կից գյուղատնտեսական-արտադրական խորհրդակցություններ կազմական-արտադրական կոնտրակտացիան կոռպերացության կամ առաջնամարտի հանձնարարել խնամքով ուղերձելով: Յերկրկոմին հանձնարարել խնամքով մասին զետեմբարելու այդ փորձը և հետևանքների մասին զետեմբարելու կենտ կոմիտեյին:

9. Եեշտելով կոլտնտեսությունների շինարարության աճումն Հյուսիսային Կովկասում, (ընդհանուր հողագոտագործման 7,2 տոկոսն և կազմում) վորպես

գյուղացիական ցրված տնաեսությունը սոցիալիստականորեն վերակառուցելու կարևոր փաստ, շեշտելով նաև կոլեկտիվ տնտեսություններում արդեն ձեռքբերված փաստական հաջողությունները՝ ավելի բարձր բերքատվության և յեկամտաբերության խմաստով՝ համեմատած գյուղացիական անհատական տնտեսությունների (հետ) առաջարկել կուսկազմակերպությանը յելնել կլինիկանությունների շինարարության հետագա անմասն պայմաններն ապահովելու լիվ իր ժամանակին կազմակերպչութեն յել տնտեսականութեն սպասարկելու անհամար դեռև կոլտնտեսությունների շարժմանը խանգարող մէջ շարք լուրջ թերություններ վերացնելու գուղղությամբ։ Այդ թերությունները հետևյալներն են. — կոլտնտեսությունների գեռևս մանր լինելը, նրանց կազմի հասունությունը, կենցաղային պայմանների կարգավորված չլինելը, համայնացված արտադրական միջոցների և կապիտալների դեռևս անբավարար աճումը, «վայրենի» կոլտնտեսությունների գոյությունը կուրակային տարրերի հետ միասին կեղծ կոլտնտեսություններ կազմակերպելու փորձերը և այլն։

Պետք ե հետամուտ լինել, վարպեսզի կոլտնտեսությունները չկտրվեն իրենց շրջապատող գյուղացիական տնտեսությունների մասսայից և կապված լինցն նրանց հետ այն խմաստով, վոր հողի ավելի կուլտուրական մշակման, իրենց տնտեսություններն ավելի լավ յեղանակով վարելու, չքավոր և միջակ անհատական տնտեսություններին ամեն տեսակի արտադրական (մեքենաներ, սերմացու) և ազրիկուտուրական ոգնություն ցույց տալու միջոցով ազդեն

նրանց վրա։ Հատկապես այդ միջոցը կունենա ահագին նշանակություն գյուղացիական ցանուցիր տնտեսությունները դեպի համայնացված գյուղատնտեսության ձանապարհը փոխադրելու գործում։

10. Առաջարկել շյուսիսային կովկասի Յերկրային կոմիտեյին կոլտնտեսությունների հետ միասին ուժեղացնել իր ուշադրությունը նաև խորհությունների աշխատանիքի վրա, վրավիճակներն իրանք (խորհությունները) հետզհետե գառնում են սոցիալիստական մասի ամենալուրջ գործոնները գյուղատնտեսության մեջ և կենտրոնի հուլիսյան պլենումի վրացումների կապակցությամբ առանձնապես կարևոր նշանակություն են ստանում։ Գործնականում անհրաժեշտ ե ջանալ հասնելու այն բանին, վոր խորհրդային անտեսությունները կատարեն վոչ միայն հացահատիկային ֆաբրիկաների գերը, այլև շրջապատող գյուղացիական տնտեսությունների համար գառնան գյուղացիական տնտեսությունների հոգագործության որինակ և տնտեսությունը կուլտուրական յեղանակներով վարելու դպրոց, վոր խորհություններին կուղագործության և գյուղացիության միջև հաստատվեն արտադրական վորոշ կապեր՝ խորհություններու մեքենաներն ու սերմացուն պայմանագրերին սկզբունքներով ոգտագործելու, խորհություններին կից գպրացներ և գյուղատնտեսական դասնթացներ կազմակերպելու և չքավոր, միջակ ակտիվ տարրերին նրանց մեջ զրագելու միջոցով։ Այդ պայմանների գոյւրյան դեպիում մեր խորհությունները կխաղան զյուղացիական ցանուցիր տնտեսությունների սոցիալիստականութեն վերակազմակերպողների խսկան դերը։

‘Գյուղատնաեսության՝ ինչպես նրա սոցիալիստական սեկտորի, այնպես ել չքավոր-միջակ տնտեսությունների արտադրական ուժերն ավելի մեծ վճռականությամբ բարձրացնելու և միջակի հետ դաշինքն ամրապնդելու խնդիրը մեղ վրա պարտք և դնում վըճճականապես վերացնել գյուղի կուսակցական և խորհրդային որդանների աշխատանքների մեջ նկատված վերոհիշյալ թերությունները և անպայման ապահովել մեր կուսակցության պարզորոշ և ճկուն դասակարգային գծի կիրառումը վոր սահմանվել և 15-րդ համագումարի վորոշումներով։

13. Զնայած կուսակցական հարածուն աղքեցության գյուղի չքավոր խավերի շրջանում և առանձին հաջողություններին, վոր ձեռք են բերված տեղական կուսակցական կազմակերպությունների կողմից չքավորությունը կուսակցության և խորհրդային իշխանության առանձին ձեռնարկումների շուրջը համախմբելու համար կատարված աշխատանքների մեջ պետք և այնուամենայնիվ ընդունել, վոր չքավորության մեջ տարվող աշխատանքը շարունակում և տառապել ահագին թերություններով, վորսնցից հիմնականները հետեւալներն են։ — սխտեմատիկ աշխատանքի բացակայությունը, այդ աշխատանքի հատվածական կամապահական բնույթը, չքավորական խմբակների կազմակերպություններում, չքավորությունը կոոպերատիվ կազմակերպություններում, չքավորությունը կոոպերացնելու աշխատանքի անբավարար լինելը և ակտիվ առաջ քաշման գործերի թուլությունը։ Անհրաժեշտ է հետեւ աշխատանքի պրակտիկայում անպայման վերացնելու այդ թերությունները և չքավորության մեջ

իրապես ապահովելու իսկական, ամուր կազմակերպված հենարան կուսակցության կողմից գյուղում կիրառվող բոլոր ձեռնարկումների համար։

14. Միանգանայն անբալարաց և նայել բատրակներին կազմակերպելու համար կատարվող աջակատանքիր։ Այդ հանդամանքը բնորոշվում և նախ նրանով, վոր պրոֆմիութենական կազմակերպությունները թույլ են ընդգրկում բատրակությունը և ապա նրանով վոր բատրակների թիվը կուսակցության մեջ քիչ ե։ Մէնչ դեռ չյուսիսային կովկասում գոյություն ունի բատրակության մի մեծ միջնաշերտ, վորին կուսակցությունը կարող եր ոգասագործել մեր խորհրդային և կոռպերատիվ կազմակերպությունների աշխատանքը կուռզում ուժեղացնելու համար։ Յերկրկոմին պարտագործնել ուժեղացնելու աշխատանքը բատրակների վորեցնել ինչպես նրանց պրոֆմիության մեջ կազմականացնելու, ուունապես նաև կուսակցության մեջ գըմակերպելու, ուունապես նաև կուսակցության մեջ գըրավելու համար տարվող տոկուն և սիստեմատիկ աշխատանքի միջոցով։

15. Հյուսիսային կովկասի պայմանները բնորոշվում են ունետր-կուլակային համեմատաբար ավելի ուժեղ միջնաշերտով։ այստեղից հետեւում և այն, վոր պյուղում գոյություն ունեն ալիքի սրված դասակարգային հարաբերություններ։ այդ պայմանների բնորոշ կողմերից մեկն ել այն ե, վոր համեմատաբար թույլ են պրոլետարական կազմերը։ հանգամանք, վոր չափանից խոշոր գժվարություններ և ստեղծում ուայունական և շրջանային կուսիսարհրդային ստորին աշխատանքի համար աշխատաղների բավականաչափ ուժեղ և կայուն շարքեր կազմելու համար։ Կուսաշխատանքը

գյուղում ուժեղացնելու համար առաջադրված խնդիր-ների կապակցությամբ նկատի ունենալով Հյուսիսային Կովկասի վերոհիշյալ առանձնահատուկ պայմանները՝ պլենումը կենտրկոմի կազմըյուրոյին հանձնարարում և ձեռք առնել բոլոր միջոցները Հյուսիսային Կովկասն աշխատողներով ուժեղացնելու համար ի հաշիվ պրոլետարական կենտրոնների (Մոսկվա, Լենինգրադ և այլն): Դրա հետ միասին Յերկրկոմին պարտավորեցնել Հյուսիսային Կովկասում ուժեղացնելու պրոլետարական կազմերի պատրաստումը՝ գյուղում աշխատող բոլոր կազմակերպությունների աշխատանքներն առմբարդնելու նպատակով:



«Ազգային գրադարան»



NL0036116

ԳԻՒԾ 25 ԿՈՊ.

РЕЗОЛЮЦИИ
Ноябрьского пленума
ЦК ВКП (б)